

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**



ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐԸ 9809-ARM

Վարկային համաձայնագիր

(Հայաստանի զբոսաշրջության եւ մարզային ենթակառուցվածքների ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

եւ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

միջեւ

## **ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ (Բանկ) միջեւ Ստորագրման ամսաթվով թվագրված ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ: Վարկառուն եւ Բանկը սույնով համաձայնում են հետեւյալի վերաբերյալ.

### **ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ**

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված են սույն Համաձայնագրի Հավելվածում) վերաբերում են սույն Համաձայնագրին եւ դրա մասն են կազմում:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, սույն Համաձայնագրում մեծատառով կիրառվող եզրույթները կրում են Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի Հավելվածում դրանց վերագրված իմաստը:

### **ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԸ**

2.01. Բանկը համաձայնում է Վարկառուին տրամադրել իննսունվեց միլիոն չորս հարյուր հազար եվրո (96,400,000 ԵՎՐՈ) գումար, որն Արժույթի փոխարկման միջոցով կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել (Վարկ)՝ ա) սույն Համաձայնագրի Առդիր 1-ում նկարագրված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու նպատակով:

2.02. Վարկառուն կարող է Վարկային միջոցներն առհանել սույն Համաձայնագրի Առդիր 2-ի III Բաժնի համաձայն:

2.03. Սկզբնավճարը կազմում է Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդը (0.25%):

2.04. Պարտավճարը կազմում է Վարկի չառհանված մնացորդի տարեկան

մեկ տոկոսի մեկ քառորդը (0.25%):

2.05. Տոկոսադրույքը Հաշվարկային դրույքաչափն է՝ գումարած Փոփոխական սպրեդը կամ այնպիսի դրույքաչափ, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ Ընդհանուր պայմանների 3.02 Բաժնի «ե» կետի համաձայն:

2.06. Վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը եւ դեկտեմբերի 1-ը:

2.07. Վարկի մայր գումարը պետք է մարվի Ընդհանուր պայմանների 3.03 Բաժնի եւ սույն Համաձայնագրի Առդիր 3-ի համաձայն:

### **ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐԸ**

3.01. Վարկառուն հայտնում է իր հանձնառությունը Ծրագրի նպատակների առնչությամբ: Այս կապակցությամբ Վարկառուն իրականացնում է Ծրագրի 4-րդ մասը եւ ապահովում է Ծրագրի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերի (միասին՝ Ծրագրի համապատասխան մաս) իրականացումը Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից՝ Ընդհանուր պայմանների Հոդված V-ի դրույթների, սույն Համաձայնագրի Առդիր 2-ի եւ Ծրագրի համաձայնագրի համաձայն:

### **ՀՈԴՎԱԾ IV. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

4.01. Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայմանները բաղկացած են հետեւյալից.

ա) Ենթահամաձայնագիրը դրա Կողմերի միջեւ կնքվել է Բանկի համար ընդունելի ձեւով.

բ) Վարկառուն ստեղծել է Ծրագրի ղեկավարման կոմիտե՝ Բանկի համար ընդունելի լիազորությունների շրջանակով եւ կազմով.

գ) Վարկառուն ստեղծել է Ծրագրի աշխատանքային խումբ՝ Բանկի համար

ընդունելի լիազորությունների շրջանակով եւ կազմով.

դ) Ծրագրի իրականացման կազմակերպությունը հաստատել է Ծրագրի գործառնական ձեռնարկը, որը ներառում է Ֆինանսական կառավարման ձեռնարկը, Կարողությունների զարգացման պլանը եւ Սեռական շահագործման կամ բռնության եւ սեռական ոտնձգությունների կանխարգելման գործողությունների ծրագիրը՝ բոլորը Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով.

ե) Ծրագրի իրականացման կազմակերպությունը հաստատել, այնուհետեւ հանրայնացրել է Բնապահպանական եւ սոցիալական կառավարման շրջանակը՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով.

զ) Ծրագրի իրականացման կազմակերպությունը հաստատել, այնուհետեւ հանրայնացրել է Աշխատանքային ռեսուրսների կառավարման ընթացակարգերը՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով.

է) Ծրագրի իրականացման կազմակերպությունը հաստատել, այնուհետեւ հանրայնացրել է Տարաբնակեցման շրջանակը՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով.

ը) Ծրագրի իրականացման կազմակերպությունը հաստատել, այնուհետեւ հանրայնացրել է Շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցության պլանը՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով.

թ) Ծրագրի իրականացման կազմակերպությունը ներդրել է Հետադարձ կապի ապահովման եւ բողոքների արձագանքման մեխանիզմ՝ Բանկի համար ընդունելի ձեւով, բովանդակությամբ եւ կարգով:

4.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը Համաձայնագրի Ստորագրման ամսաթվից հետո հարյուր ութսուն (180) օր է:

## ՀՈԴՎԱԾ V. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ, ՀԱՍՑԵՆԵՐԸ

5.01. Վարկառուի ներկայացուցիչը դրա Ֆինանսների նախարարն է:

5.02. Ընդհանուր պայմանների 10.01 Բաժնի նպատակներով՝

ա) Վարկառուի հասցեն է՝

Հայաստանի Հանրապետություն

Երեւան, 0010

Մելիք-Աղամյան փողոց 1

Ֆինանսների նախարարություն, ԵԱ

բ) Վարկառուի էլեկտրոնային հասցեն է՝

Ֆաքս՝

+374-11-800132

5.03. Ընդհանուր պայմանների 10.01 Բաժնի նպատակներով՝

ա) Բանկի հասցեն է՝

International Bank for Reconstruction and Development

1818 H Street, N.W.

Washington, D.C. 20433

United States of America, ԵԱ

բ) Բանկի էլեկտրոնային հասցեն է՝

Տելեքս՝ Ֆաքս՝

248423(MCI) կամ 1-202-477-6391

64145(MCI)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է ստորագրման ամսաթվի դրությամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**

---

Լիազոր ներկայացուցիչ

**Անունը՝ Վահե Հովհաննիսյան**

**Պաշտոնը՝ ֆինանսների նախարար**

**Ամսաթիվը՝ 23 հուլիսի 2025թ.**

**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ՝**

---

Լիազոր ներկայացուցիչ

**Անունը՝ Ֆաբրիցիո Զարկոն**

**Պաշտոնը՝ Երկրի կառավարիչ**

**Ամսաթիվը՝ 22 հուլիսի 2025թ.**

## ԱՌԴԻՐ 1

### Ծրագրի նկարագրությունը

Ծրագրի նպատակներն են կլիմայակայուն ենթակառուցվածքների հասանելիության բարելավումը եւ Հայաստանում Ծրագրի կողմից աջակցվող կլաստերների տեղական տնտեսությունում զբոսաշրջության ունեցած ներդրման ավելացումը:

Ծրագիրը կազմված է հետեւյալ մասերից.

#### **Մաս 1.      Կլաստերների ինտեգրված եւ կայուն զարգացման խթանում**

ա. Դիլիջանի, Դվինի, Գորիսի, Ջերմուկի եւ Եղեգիսի համար Կլաստերային զարգացման ծրագրերի (ԿԶԾ-ներ) մշակում եւ ամփոփում:

բ. Կլիմային եւ աղետներին դիմակայուն գոտիավորման պլանների եւ գլխավոր հատակագծերի մշակում, ներդրումների պլանավորման ուսումնասիրություններ եւ այլ վերլուծական աշխատանքներ, որոնք անհրաժեշտ են Ծրագրի 1-ին Մասի «ա» կետի շրջանակներում ԿԶԾ-ների մշակման եւ ամփոփման համար:

գ. Հանրային իրազեկման արշավների եւ դրանց հետ կապված՝ քաղաքացիների ներգրավման միջոցառումների իրականացում ԿԶԾ-ների նախապատրաստման ընթացքում եւ Ծրագրի ղեկավարման կոմիտեի (ԾՂԿ) կողմից ԿԶԾ-ները հաստատելուց հետո՝ տեղական սեփականության սկզբունքի խթանման, ապագա քաղաքային եւ տարածական պլանավորման վերաբերյալ իրազեկման եւ որոշումների կայացման գործընթացին աջակցելու համար:

դ. Զբոսաշրջային ակտիվների համար շահագործման եւ սպասարկման պլանների եւ մշակութային ժառանգության օբյեկտների համար օբյեկտի կառավարման պլանների մշակում՝ զբոսաշրջային ակտիվների երկարաժամկետ մշտադիտարկման եւ պահպանման նպատակով:

ե. Ուսումնասիրությունների անցկացում եւ զբոսաշրջային տվյալների ստացմանն ուղղված այլ միջոցառումների իրականացում՝ անանուն տեղեկությունների հավաքման եւ զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի, օրինակ՝ Զբոսաշրջության կոմիտեի եւ Զբոսաշրջային ուղղությունների կառավարման տեղական կազմակերպությունների (ԶՈՒԿԿ) միջոցով տեղական զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների ներկայացման նպատակով:

զ. Վերապատրաստման, կարողությունների զարգացման, ապրանքների եւ սարքավորումների մատակարարման ապահովում՝ Արենիում, Դիլիջանում, Եղեգիսում եւ Զերմուկում ԶՈՒԿԿ-ների ստեղծմանը եւ գործունեությանն աջակցելու նպատակով:

է. Առաջնորդության հմտությունների զարգացման դասընթացների անցկացում եւ տեղական մակարդակով կանանց մասնակցության խթանում՝ զբոսաշրջության արժեքային շղթայում որոշումներ կայացնող մարմիններում ղեկավար դերեր ստանձնելու համար, այդ թվում՝ Ծրագրի շրջանակներում ստեղծված Տեղական աշխատանքային խմբերում կանանց ներկայացվածության ավելացման եւ նրանց համար անհրաժեշտ կարողությունների զարգացման եւ հմտությունների կատարելագործման ապահովում:

## **Մաս 2. Կլիմայակայուն ենթակառուցվածքներին աջակցում եւ մասնավոր հատվածի մասնակցության խթանում**

2.1. *Ենթակառուցվածքների եւ ծառայությունների վերականգնում եւ արդիականացում: Հիմնական եւ զբոսաշրջային ենթակառուցվածքների բարեկարգման եւ քաղաքային արդիականացման նպատակներով Տեղանքին առնչվող միջոցառումների իրականացում՝ զբոսաշրջային վայրերի եւ շրջակա տարածքների հասանելիությունը բարելավելու համար, ներառյալ, ի թիվս այլնի, հետեւյալը.*

ա) ճանապարհների եւ տրանսպորտային ենթակառուցվածքների որակի, դիմակայունության եւ վիճակի բարելավում եւ կանաչ ու էկոլոգիապես մաքուր այլընտրանքային տրանսպորտի տեսակների ներդրման խթանում՝ գոյություն ունեցող ճանապարհների եւ կամուրջների դիմակայուն շինարարության, հիմնանորոգման, բարեկարգման եւ/կամ տեխնիկական սպասարկման, հետիոտնային գոտիների ընդլայնման, փողոցների բարեկարգման եւ փողոցներում լուսադիոդային լուսավորության տեղադրման եւ այլ կանաչ ենթակառուցվածքների տարրերի օգտագործման միջոցով կլիմայադիմակայունության ապահովման եւ փողոցների, մուտքային ճանապարհների ու կայանատեղիների գրավչության բարձրացման նպատակով:

բ) Հիմնական ենթակառուցվածքների եւ ծառայությունների կլիմայադիմակայուն արդիականացում եւ եւ համայնքային ենթակառուցվածքների վերականգնում՝ տեղում առկա ջրամատակարարման միացումների բարելավման, կոյուղատար համակարգերի եւ կեղտաջրերի հավաքման ու հեռացման համակարգերի վերականգնման եւ արդիականացման, հեղեղատար համակարգի պատշաճ կառավարման բարելավման, ինչպես նաեւ հեռահաղորդակցության ենթակառուցվածքների կայուն վերականգնման եւ/կամ արդիականացման միջոցով՝ տեղական համայնքների եւ բիզնեսների թվային հասանելիության եւ կապի բարելավման նպատակով, ներառյալ՝ ցանցային կապակցելիության հասանելիության ապահովումը՝ աղետներից առաջ եւ հետո հաղորդակցությունն ապահովելու նպատակով:

գ) Հանրային նշանակության եւ բաց տարածքների գրավչության բարձրացում՝ կանաչ տարածքների վերականգնման եւ/կամ ընդլայնման, հանրային զբոսայգիների բարեկարգման, փողոցների բարեկարգման, ինչպես նաեւ պատշաճ զբոսաշրջային փորձի համար քաղաքային հարմարությունների ապահովման միջոցով:

դ) Կլիմայադիմակայուն զբոսաշրջային ենթակառուցվածքների եւ ծառայությունների ապահովում՝ զբոսաշրջային օբյեկտների, օրինակ՝ ՁՈՒԿԿ-ների եւ

թանգարանների կառուցման կամ վերականգնման, ինչպես նաև մշակութային ժառանգության ակտիվների պահպանման եւ բարելավման միջոցով, եւ

ե) Պետական-մասնավոր ներդրումների համար աջակցության տրամադրում՝ կլիմայադիմակայուն հանրային ենթակառուցվածքների փոխլրացնող բարելավումների ապահովման միջոցով՝ մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով, ինչպիսիք են կոմերցիոն նշանակության ներդրումային օբյեկտների հարակից տարածքներին հարակից հանրային օբյեկտների, ճանապարհների եւ փողոցների, ջրամատակարարման եւ կոյուղու, ինչպես նաև հեռահաղորդակցության համակարգերի կառուցումը կամ վերականգնումը:

2.2. *Մասնավոր հատվածի մասնակցության խթանումը, մասնագիտական հմտությունների կատարելագործումը եւ աշխատատեղերի ստեղծման հնարավորության ընձեռումը. **Տեղական տնտեսության զարգացման համար Ծրագրով աջակցվող*** կլաստերների խթանում եւ զբոսաշրջության ոլորտում տեղական ընկերությունների եւ անհատների մասնակցության ընդլայնում՝ հետեւյալի միջոցով.

ա) Զբոսաշրջության արժեքային շղթայի շրջանակներում բրենդավորման, մարքեթինգի եւ առաջխաղացման միջոցառումներին աջակցության ապահովում:

բ) Պետական-մասնավոր գործընկերությունների խթանում, ներառյալ՝ ԿԶԾ-ների շրջանակներում սահմանման ենթակա՝ հնարավոր կենսունակ պետական-մասնավոր գործընկերությունների գնահատումը, նախագծումը եւ նախապատրաստումը:

գ) Զբոսաշրջության եւ զբոսաշրջությանն առնչվող բիզնեսում ներգրավված տեղական աշխատողների համար մասնագիտական հմտությունների զարգացման ապահովում հյուրանոցային, ռեստորանային եւ հանրային սննդի ոլորտում՝ առաջնահերթություն տալով խոցելի եւ անապահով խմբերին:

դ) Հյուրանոցային, ռեստորանային եւ հասարակական սննդի ոլորտում գործնական ուսուցման, կարիերայի խորհրդատվության եւ ֆորմալ ուսուցման ապահովում:

ե) Տեղական զբոսաշրջային ընկերությունների եւ ձեռնարկատերերի համար վերապատրաստման եւ կարողությունների զարգացման միջոցառումների իրականացում՝ բիզնես գաղափարների մտահղացման, բիզնեսի պլանավորման, ներդրողների համար փիթչինգի (ներկայացման), բրենդավորման, մարքեթինգի եւ վաճառքի ռազմավարությունների մշակման եւ վարչական գործընթացների շրջանակներում՝ բիզնեսի գրանցումն ու պահանջներին համապատասխանության ապահովումը դյուրացնելու նպատակով, ներառյալ՝ կանանց կողմից ղեկավարվող բիզնեսներին թիրախային աջակցությունը:

զ) Ծրագրով աջակցվող կլաստերների միջոցով զբոսաշրջության ոլորտում աշխատատեղերի ստեղծումը խթանելուն ուղղված միջոցառումների մշակման, իրականացման եւ/կամ մշտադիտարկման նպատակով ուսումնասիրությունների մշակում եւ վերլուծական աշխատանք:

է) Թվային գործիքների, ինչպես օրինակ՝ ծրագրաշարային հավելվածների մշակում եւ/կամ առաջմղում, որոնք իրական ժամանակում տրամադրում են տեղեկություններ՝ տրանսպորտային փոխադրման տարբերակների, միջոցառումների, փառատոների օրացույցի, հասանելի հարմարությունների, արշավային արահետների եւ տուրերի կազմակերպիչների վերաբերյալ, ինչպես նաեւ ժամանակին հաղորդում են կլիմայական վտանգների մասին, ինչպիսիք են անտառային հրդեհների, սողանքների եւ ծայրահեղ ջերմաստիճանային պայմանների մասին նախազգուշացումները:

**Մաս 3. Ծրագրի կառավարումը եւ գործառական աջակցությունը**

Ծրագրի իրականացման կազմակերպությանն աջակցության տրամադրում. կառավարել Ծրագիրը եւ ապահովել, որ Ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները համապատասխանեն բնապահպանական, սոցիալական, ֆիդուցիար, գնումների եւ տեխնիկական չափանիշներին ներկայացվող Բանկի պահանջներին, իրականացնել մոնիթորինգի եւ գնահատման միջոցառումներ եւ զարգացնել կարողություններ՝ վերապատրաստման եւ գիտելիքների փոխանակման միջոցով:

**Մաս 4. Պայմանական արտակարգ իրավիճակներին արձագանքելու բաղադրիչը**

Անհրաժեշտության դեպքում Համապատասխանող ճգնաժամին կամ Արտակարգ իրավիճակին անհապաղ արձագանքելու ապահովում:

## ԱՌԴԻՐ 2

### Ծրագրի կատարումը

#### **Բաժին I. Իրականացման մեխանիզմները**

##### **Ա. Ինստիտուցիոնալ մեխանիզմները**

1. Վարկառուն Ծրագրի ընդհանուր համակարգման եւ քաղաքականության աջակցման պարտականությունները վերապահում է Էկոնոմիկայի նախարարությանը (ԷՆ):

2. Վարկառուն ստեղծում եւ այնուհետեւ Ծրագրի իրականացման ողջ ընթացքում պահում է Ծրագրի ղեկավարման կոմիտե (ԾՂԿ), որը՝ ա) նախագահում է Վարկառուի փոխվարչապետը, բ) կազմված է Էկոնոմիկայի նախարարության, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, ինչպես նաեւ այլ համապատասխան ճյուղային նախարարությունների, պետական կառույցների եւ տեղական ու տարածաշրջանային մարմինների ներկայացուցիչներից՝ ըստ անհրաժեշտության, եւ գ) պատասխանատու է բարձր մակարդակով ռազմավարական որոշումների կայացման համար, այդ թվում՝ ԿԶԾ-ների եւ ԿԶԾ-ներով սահմանվող՝ Տեղանքին առնչվող միջոցառումների հաստատման եւ միջգերատեսչական համագործակցության խթանման համար:

3. Վարկառուն ստեղծում եւ այնուհետեւ Ծրագրի իրականացման ողջ ընթացքում պահում է Ծրագրի աշխատանքային խումբ (ԾԱԽ), որը՝ ա) ղեկավարում է Էկոնոմիկայի նախարարը, բ) կազմված է ԷՆ-ի եւ Ծրագրի իրականացման կազմակերպության ներկայացուցիչներից, եւ գ) պատասխանատու է ծագող մարտահրավերների համալիր իրականացումը քննարկելու եւ հասցեագրելու, ինչպես նաեւ աշխատանքային մակարդակով հաղորդակցության եւ որոշումների կայացման գործընթացը խթանելու համար:

4. Վարկառուն իր համայնքների ղեկավարների միջոցով Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո՝ վեց (6) ամիսը չգերազանցող ժամկետում, համայնքի մակարդակով ստեղծում եւ Ծրագրի իրականացման ողջ ընթացքում պահում է Տեղական աշխատանքային խմբեր (ՏԱԽ-եր), որոնք՝ ա) կազմված են համայնքների ղեկավարներից, համայնքային իշխանության ներկայացուցիչներից, տեղական ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից, ակտիվ ռեզիդենտներից եւ մասնավոր հատվածից, եւ բ) պատասխանատու են ԿԶԾ-երի մշակման համար խորհրդատվության եւ ուղղորդման համար, հանդես են գալիս որպես տեղական համայնքների՝ հետադարձ կապի ապահովման եւ/կամ այն մտահոգությունների վերհանման հարցերով կոնտակտային մարմիններ, որոնք առնչվում են Ծրագրի 2-րդ Մասով սահմանված Տեղանքին առնչվող միջոցառումների նախապատրաստմանը, տեխնիկական նախագծմանը եւ իրականացմանը, ինչպես նաեւ այն հարցերի բարձրաձայնմանը, որոնք վերաբերում են Ծրագրի իրականացման կազմակերպության, կապալառուների եւ շահագրգիռ այլ կողմերի հետ համագործակցությամբ կատարվող աշխատանքի որակին, եւ համայնքին կանոնավոր կերպով տեղեկացնում են Ծրագրով աջակցվող կլաստերների շրջանակներում իրականացվող միջոցառումների առաջընթացի մասին եւ տեղական մակարդակով համակարգում են բողոքներին արձագանքելու գործընթացը:

#### **Բ. Ենթահամաձայնագիրը**

1. Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Ծրագրի համապատասխան մասի իրականացումը դյուրացնելու նպատակով Վարկառուն վարկային միջոցները Ծրագրի իրականացման կազմակերպությանն է տրամադրում Վարկառուի բյուջետավորման գործընթացների համաձայն՝ Վարկառուի եւ Ծրագրի իրականացման կազմակերպության միջեւ կնքված լրացուցիչ համաձայնագրի (Ենթահամաձայնագիր) հիման վրա՝ Բանկի կողմից հաստատված պայմաններով:

2. Վարկառուն Ենթահամաձայնագրով սահմանված իր իրավունքներն

իրացնում է այնպես, որ պաշտպանի Վարկառուի եւ Բանկի շահերը եւ ապահովի Վարկի նպատակների իրագործումը: Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ համաձայնության է գալիս, Վարկառուն չի զիջում, չի փոփոխում, չի չեղարկում Ենթահամաձայնագիրը կամ դրա որեւէ դրույթ կամ չի հրաժարվում դրանցից:

#### **Գ. Ծրագրի գործառնական ձեռնարկը**

1. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունը՝

ա) Ծրագիրն ընդունի, այնուհետեւ իրականացնի Բանկի համար ընդունելի ձեռով, բովանդակությամբ եւ կարգով՝ Ծրագրի գործառնական ձեռնարկին համաձայն, որը ներառում է՝

i) Ծրագրի իրականացման համար մանրամասն ինստիտուցիոնալ, վարչական, ֆինանսական, գնումների, տեխնիկական եւ գործառնական մեխանիզմներ եւ ընթացակարգեր,

ii) ԾՂԿ-ի մանրամասն կազմը, ներկայացվածությունը եւ դրա հանդիպումների հաճախականությունը,

iii) ԾԱԽ-ի եւ ՏԱԽ-երի մանրամասն կազմը, դերերը, պարտականությունները եւ ընդհանուր գործառույթները,

iv) Ծրագրի մանրամասն համակարգման մեխանիզմները՝ ազգային եւ տեղական մակարդակներով,

v) համապատասխան բոլոր շահագրգիռ կողմերին ներգրավելու ընթացակարգերը,

vi) Ծրագրի 2.1 Մասի համաձայն՝ Տեղանքին առնչվող միջոցառումների մասով համապատասխանելիության մանրամասն չափորոշիչները, պայմանները, ընտրության եւ հաստատման գործընթացները եւ իրականացման ընթացակարգերը,

vii) Ծրագրով աջակցվող յուրաքանչյուր կլաստերի շրջանակներում հավանական Տեղանքին առնչվող միջոցառումների ցանկը,

viii) Ծրագրի 2.2 Մասի «բ» կետի համաձայն՝ պետական-մասնավոր գործընկերության խթանման մասով համապատասխանելիության մանրամասն չափորոշիչները, պայմանները եւ ընտրության ու իրականացման ընթացակարգերը,

ix) Ծրագրի իրականացման կազմակերպության անձնակազմի եւ ղեկավար կազմի պարտականությունների մանրամասները,

x) ԶՈՒԿԿ-ների մանրամասն գործառույթները եւ լիազորությունների շրջանակը,

xi) հետադարձ կապի ապահովման եւ բողոքներին արձագանքելու մեխանիզմի մանրամասն պայմանները եւ իրականացման ընթացակարգերը,

xii) Ֆինանսական կառավարման ձեռնարկը,

xiii) Կարողությունների զարգացման պլանը, եւ

xiv) Սեռական շահագործման կամ բռնության եւ սեռական ոտնձգությունների կանխարգելման գործողությունների ծրագիրը, եւ

բ) Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը գրավոր այլ համաձայնության է գալիս, չփոփոխի, չչեղարկի Ծրագրի գործառնական ձեռնարկի որեւէ դրույթ կամ չհրաժարվի դրանից, ինչպես նաեւ չթույլատրի Ծրագրի գործառնական ձեռնարկի որեւէ դրույթի փոփոխումը, չեղարկումը կամ կասեցումը:

2. Եթե նշված ձեռնարկում սահմանված դրույթներն ու ընթացակարգերը հակասում են սույն Համաձայնագրի դրույթներին, ապա գերակայում են վերջինիս դրույթները:

## **Դ. Պայմանական արտակարգ իրավիճակներին արձագանքելը**

ա) Ծրագրի 4-րդ Մասի շրջանակներում պայմանական արտակարգ իրավիճակներին արձագանքելու միջոցառումների (Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մաս) պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով Վարկառուն ապահովում է, որ՝

ա) մշակվի եւ հաստատվի Բանկի համար ընդունելի ձեռով եւ բովանդակությամբ ձեռնարկ (ՊԱԻԱԲ ձեռնարկ), որում սահմանվեն Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի իրականացման մանրամասն մեխանիզմները, ներառյալ՝ i) Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի համակարգման եւ իրականացման ցանկացած կառուցվածք կամ ինստիտուցիոնալ մեխանիզմ, ii) հատուկ միջոցառումներ, որոնք կարող են ներառվել Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասում, դրա համար պահանջվող թույլատրելի ծախսեր (Արտակարգ իրավիճակներում կատարվող ծախսեր) եւ դրանք ներառելու ցանկացած այլ ընթացակարգեր, iii) Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի ֆինանսական կառավարման մեխանիզմներ, iv) Պայմանական արտակարգ իրավիճակներին արձագանքելու մասին առնչվող գնումների մեթոդներ եւ ընթացակարգեր, v) Արտակարգ իրավիճակների ծախսերի ֆինանսավորման նպատակով գումարների առհանման համար պահանջվող փաստաթղթեր, vi) Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի համար բնապահպանական եւ սոցիալական գնահատման եւ կառավարման մեխանիզմների նկարագիր, եւ vii) Արտակարգ իրավիճակների գործողությունների պլանի ձեւանմուշ:

բ) Արտակարգ իրավիճակների գործողությունների պլանը մշակվում եւ ընդունվում է Վարկառուի համար ընդունելի ձեռով եւ բովանդակությամբ:

գ) Արտակարգ իրավիճակին արձագանքելու մասն իրականացվում է ՊԱԻԱԲ ձեռնարկի եւ Արտակարգ իրավիճակների գործողությունների պլանի համաձայն՝ պայմանով, սակայն, որ եթե ՊԱԻԱԲ ձեռնարկի կամ Արտակարգ իրավիճակների գործողությունների պլանի եւ սույն Համաձայնագրի դրույթների միջեւ որեւէ անհամապատասխանություն լինի, ապա գերակայեն սույն

Համաձայնագրի դրույթները, եւ

դ) Ոչ ՊԱԻԱԲ ձեռնարկը եւ ոչ էլ Արտակարգ իրավիճակների գործողությունների պլանը չեն փոփոխվում, չեն կասեցվում, չեն չեղարկվում, չեն վերացվում կամ դրանցից հրաժարում տեղի չի ունենում առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

2. Վարկառուն ապահովում է, որ ՊԱԻԱԲ ձեռնարկում նշված կառույցներն ու մեխանիզմները պահպանվեն Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի իրականացման ողջ ընթացքում՝ Բանկի համար ընդունելի բավարար անձնակազմով եւ ռեսուրսներով:

3. Վարկառուն ապահովում է, որ՝

ա) Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի համար պահանջվող բնապահպանական եւ սոցիալական փաստաթղթերը մշակվեն, հրապարակվեն եւ ընդունվեն ՊԱԻԱԲ ձեռնարկի եւ ԲՍՀՊ-ի համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ, եւ

բ) Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասն իրականացվի բնապահպանական եւ սոցիալական փաստաթղթերի համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձեւով:

4. Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի շրջանակներում իրականացվող միջոցառումներ նախաձեռնվում են միայն Համապատասխանող ճգնաժամ կամ Արտակարգ իրավիճակ տեղի ունենալուց հետո:

## **Ե. Բնապահպանական եւ սոցիալական ստանդարտները**

1. Վարկառուն ապահովում է եւ անում է այնպես, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունն ապահովի Ծրագրի իրականացումը Բնապահպանական եւ սոցիալական ստանդարտների համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձեւով:

2. Չսահմանափակելով վերոնշյալ 1 կետը՝ Վարկառուն ապահովում է եւ անում է այնպես, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունն ապահովի Ծրագրի իրականացումը Բնապահպանական եւ սոցիալական հանձնառությունների պլանի (ԲՍՀՊ) համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձեւով: Այս նպատակով Վարկառուն ապահովում է եւ անում է այնպես, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունն ապահովի, որ՝

ա) ԲՍՀՊ-ում նշված միջոցառումներն ու գործողություններն իրականացվեն պատշաճ եւ արդյունավետ կերպով, ինչպես նախատեսված է ԲՍՀՊ-ում,

բ) ԲՍՀՊ-ի իրականացման հետ կապած ծախսերը կատարելու համար բավարար միջոցներ հասանելի լինեն,

գ) ԲՍՀՊ-ի իրականացման համար պահպանվեն քաղաքականություններ եւ ընթացակարգեր, եւ ներգրավվի համարժեք թվով որակավորված ու փորձառու անձնակազմ, ինչպես նախատեսված է ԲՍՀՊ-ում, եւ

դ) ԲՍՀՊ-ն կամ դրա որեւէ դրույթ չփոխվի, չչեղարկվի, չկասեցվի կամ դրանից հրաժարում տեղի չունենա՝ բացառությամբ այն դեպքի, երբ ԲՍՀՊ-ում սահմանված կարգով Բանկն այլ գրավոր համաձայնության է գալիս, եւ ապահովի, որ լրամշակված ԲՍՀՊ-ն հրապարակվի դրանից անմիջապես հետո:

3. ԲՍՀՊ-ի եւ սույն Համաձայնագրի դրույթների միջեւ որեւէ անհամապատասխանության դեպքում գերակայում են սույն Համաձայնագրի դրույթները:

4. Վարկառուն ապահովում է եւ անում այնպես, որ Ծրագրի իրականացման

կազմակերպությունն ապահովի, որ՝

ա) ձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր միջոցները՝ հավաքելու, կազմելու եւ ԲՍՀՊ-ում սահմանված պարբերականությամբ, կանոնավոր հաշվետվությունների միջոցով, իսկ Բանկի կողմից պահանջվելու դեպքում՝ անմիջապես առանձին հաշվետվությամբ կամ հաշվետվությունների միջոցով Բանկին կանոնավոր կերպով ներկայացնելու ԲՍՀՊ-ին եւ դրանում նշված բնապահպանական եւ սոցիալական փաստաթղթերին համապատասխանության կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները. Բանկի համար ընդունելի ձեով եւ բովանդակությամբ բոլոր այդ հաշվետվություններում, ի թիվս այլնի, նշվում են՝ i) ԲՍՀՊ-ի իրականացման կարգավիճակը, ii) պայմանները, որոնք խոչընդոտում են կամ կարող են խոչընդոտել ԲՍՀՊ-ի իրականացումը, եթե այդպիսիք կան, եւ iii) ուղղիչ ու կանխարգելիչ միջոցառումները, որոնք ձեռնարկվում են, կամ որոնք անհրաժեշտ է ձեռնարկել այդ պայմաններին արձագանքելու համար, եւ

բ) Բանկին անհապաղ տեղեկացվում է Ծրագրին առնչվող կամ Ծրագրի վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջադեպի կամ պատահարի մասին, որն ունեցել է կամ հավանական է, որ ունենա էական անբարենպաստ ազդեցություն շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հանրության կամ աշխատողների վրա՝ ԲՍՀՊ-ի, դրա մեջ նշված բնապահպանական եւ սոցիալական փաստաթղթերի եւ Բնապահպանական եւ սոցիալական ստանդարտների համաձայն:

5. Վարկառուն ապահովում է եւ անում է այնպես, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունն ստեղծի, հանրայնացնի, պահպանի եւ գործարկի բողոքների արձագանքման հասանելի մեխանիզմ՝ Ծրագրի ազդակիր անձանցից վերջիններիս մտահոգությունները եւ բողոքներն ստանալու ու դրանց կարգավորումը դյուրացնելու համար, ու ձեռնարկի անհրաժեշտ եւ պատշաճ բոլոր միջոցները՝ այդ մտահոգությունները եւ բողոքները կարգավորելու կամ դրանց կարգավորումը դյուրացնելու համար՝ Բանկի համար ընդունելի ձեով:

6. Վարկառուն ապահովում է եւ անում է այնպես, որ Ծրագրի իրականացման կազմակերպությունն ապահովի, որ Ծրագրով նախատեսված բոլոր մրցութային փաստաթղթերում եւ շինարարական կապալի պայմանագրերում ներառվի կապալառուների, ենթակապալառուների եւ վերահսկող կազմակերպությունների պարտավորությունը՝ ա) պահպանել ԲՍՀՊ-ի եւ այդտեղ նշված բնապահպանական ու սոցիալական փաստաթղթերի համապատասխան դրույթները, եւ բ) ընդունել եւ գործողության մեջ դնել վարքագծի կանոնագրքեր, որոնք պետք է տրամադրվեն բոլոր աշխատակիցներին եւ ստորագրվեն նրանց կողմից՝ մանրամասն ներկայացնելով միջոցներ՝ բնապահպանական, սոցիալական, առողջապահական եւ անվտանգության ռիսկերին, ինչպես նաեւ սեռական շահագործման եւ բռնության, սեռական ոտնձգությունների եւ երեխաների նկատմամբ բռնության ռիսկերին հակազդելու համար, բոլոր այն հարցերը, որոնք կիրառելի են նշված պայմանագրերի համաձայն ձեռնարկված կամ իրականացված շինարարական կապալի այդ աշխատանքների առնչությամբ:

**Բաժին II. Ծրագրի մշտադիտարկումը, հաշվետվությունների ներկայացումը եւ գնահատումը**

Վարկառուն Ծրագրի վերաբերյալ յուրաքանչյուր հաշվետվություն Բանկին է ներկայացնում օրացուցային յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ ոչ ուշ, քան քառասունհինգ (45) օրվա ընթացքում, որն ընդգրկում է օրացուցային կիսամյակը:

**Բաժին III. Վարկային միջոցների առհանումը**

**Ա. Ընդհանուր**

Չսահմանափակելով Ընդհանուր պայմանների II Հոդվածի դրույթները՝ Վարկառուն կարող է վարկային միջոցներն առհանել Ծրագրի հետ կապված Թույլատրելի ծախսերի ֆինանսավորման համար՝ Միջոցների մասհանման եւ

Ֆինանսական տեղեկությունների նամակի համաձայն, ամբողջը՝ հատկացված գումարի չափով, եւ կիրառելի լինելու դեպքում՝ հետեւյալ աղյուսակում յուրաքանչյուր Կատեգորիայի համար սահմանված տոկոսի չափով.

Կատեգորիան	Վարկի հատկացված գումարը (արտահայտված Եվրոյով)	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը (հարկերը ներառյալ)
1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, վերապատրաստման եւ լրացուցիչ գործառնական ծախսեր՝ Ծրագրի 1-ին, 2.2, եւ 3-րդ մասերի համաձայն	16,870,000	80%
2) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ եւ խորհրդատվական ծառայություններ՝ Ծրագրի 2.1 մասի համաձայն	79,530,000	80%
3) Արտակարգ իրավիճակների հետ կապված ծախսեր	0	
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b>	96, 400,000	

## **Բ. Առհանման պայմանները, առհանման ժամանակահատվածը**

1. Չհակասելով վերոնշյալ Ա Մասի դրույթներին՝ որեւէ առհանում չի կատարվի՝

ա) Ստորագրման ամսաթվից առաջ կատարված վճարումների համար, կամ

բ) 3-րդ Կատեգորիայի շրջանակներում Արտակարգ իրավիճակների ծախսերի համար, եթե, ինչպես նաեւ քանի դեռ տվյալ ծախսերի առնչությամբ չեն բավարարվել հետեւյալ բոլոր պայմանները.

i) Ա) Վարկառուն որոշել է, որ տեղի է ունեցել Համապատասխանող ճգնաժամ կամ Արտակարգ իրավիճակ, եւ Բանկին է ներկայացրել վարկային միջոցների առհանման հայտ՝ 3-րդ Կատեգորիայի համաձայն, եւ Բ) Բանկը համաձայնել է այդ որոշմանը, ընդունել է նշված հայտը եւ դրա մասին ծանուցել է

Վարկառուին, եւ

ii) Վարկառուն ՊԱԻԱԲ ձեռնարկը եւ Արտակարգ իրավիճակների գործողությունների պլանն ընդունել է Բանկի համար ընդունելի ձեւով եւ բովանդակությամբ:

2. Փակման ամսաթիվը 2030 թվականի օգոստոսի 31-ն է:

### ԱՌԴԻՐ 3

#### Պարտավորության հետ կապված մարումների ժամանակացույց

Վարկառուն Վարկի մայր գումարը մարում է ստորեւ բերված աղյուսակի համաձայն, որում ներկայացվում են Վարկի մայր գումարի վճարման ամսաթվերը եւ Մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրը վճարման ենթակա՝ Վարկի ընդհանուր մայր գումարի տոկոսները (վճարման մասնաբաժին):

#### Մայր գումարի համահավասար մարումներ

Մայր գումարի վճարման ամսաթիվ	Վճարման մասնաբաժին
Յուրաքանչյուր հունիսի 1-ին եւ դեկտեմբերի 1-ին Սկսած 2034 թվականի հունիսի 1-ից մինչեւ 2045 թվականի հունիսի 1-ը	4.17%
2045 թվականի դեկտեմբերի 1-ին	4.09%

## ՀԱՎԵԼՎԱԾ

### **Բաժին I. Սահմանումները**

1. «Ենթահամաձայնագիր» նշանակում է սույն Համաձայնագրի Առդիրի 2-ի I.Բ Բաժնի եւ Ընդհանուր պայմանների 5.02 Բաժնի համաձայն Վարկառուի եւ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից եւ նրանց միջեւ կնքվող լրացուցիչ համաձայնագիրը, որով սահմանվում են Վարկառուի եւ Ծրագրի իրականացման կազմակերպության՝ Ծրագրի առնչությամբ համապատասխան պարտավորությունները:

2. «Հակակոռուպցիոն ուղեցույց» Ընդհանուր պայմանների Հավելվածի 6-րդ կետի նպատակով նշանակում է 2006թ. հոկտեմբերի 15-ով թվագրված եւ 2011 թ. հունվարին եւ 2016 թ. հուլիսի 1-ի դրությամբ լրամշակված՝ ՎՋՄԲ վարկերով եւ ՄՋԸ փոխառություններով եւ դրամաշնորհներով ֆինանսավորվող ծրագրերում զեղծարարության եւ կոռուպցիայի կանխարգելման ուղեցույցը:

3. «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ» նշանակում է Վարկառուի գործակալությունը, որն ստեղծվել է եւ գործում է ՀՏՀՀ օրենսդրության համաձայն, կամ վերջինիս ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է Բանկի համար:

4. «ՀՏՀՀ օրենսդրություն» նշանակում է Վարկառուի՝ 2000թ-ի ապրիլի 11-ի թիվ 162, 2014թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 1521-Ն որոշումները, ՀՏՀՀ-ի կանոնադրությունը եւ ցանկացած այլ լրացուցիչ ենթաօրենսդրական ակտ, որը վերաբերում է ՀՏՀՀ-ի հիմնադրմանը եւ գործունեությանը:

5. «Կարողությունների զարգացման պլան» նշանակում է կարողությունների զարգացման պլանը, որը, որպես Ծրագրի գործառնական ձեռնարկի մաս, Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Ծրագրի համար մշակվում եւ ընդունվում է Բանկի համար ընդունելի ձեւով, որը նաեւ կարող է ժամանակ առ ժամանակ լրամշակվել Բանկի նախնական գրավոր հաստատմամբ, եւ որը սահմանում է այն միջոցառումները, իրականացման

նազնավարությունները եւ պլանները, որոնք ուղղված են Ծրագրի իրականացման կազմակերպության անձնակազմի, համապատասխան շահագրգիռ կողմերի, համայնքների, տեղական համայնքների եւ Ծրագրի շրջանակներում ներգրավված աշխատակիցների կարողությունների զարգացմանը՝ ԲՍՍ-ների եւ Ծրագրին առնչվող ցանկացած բնապահպանական եւ սոցիալական փաստաթղթի պահանջների հետ համապատասխանությամբ:

6. «Կատեգորիա» նշանակում է սույն Համաձայնագրի Առդիր 2-ի III.Ա Բաժնի աղյուսակում նշված կատեգորիան:

7. «ՊԱԻԱԲ ձեռնարկ» նշանակում է սույն Համաձայնագրի Առդիր 2-ի I.Դ Բաժնում նշված ձեռնարկը, որը ժամանակ առ ժամանակ կարող է թարմացվել Բանկի հետ համաձայնեցմամբ:

8. «Կլաստերային զարգացման ծրագիր» կամ «ԿԶԾ» նշանակում է Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից մշակման ենթակա ծրագիրը՝ Ծրագրի 1-ին Մասի, Ծրագրի համաձայնագրի Առդիրի I.Գ.1 Բաժնի եւ Ծրագրի գործառնական ձեռնարկի համաձայն, իսկ «ԿԶԾ»-ներ միասին նշանակում է մեկից ավելի ԿԶԾ-ներ:

9. «Կլաստերներ» նշանակում է Վարկառուի զբոսաշրջային ուղղությունները, որոնք նշվում են Վարկառուի «Զբոսաշրջության մասին» 2023 թվականի դեկտեմբերի 22-ի օրենքում եւ սահմանվում են Վարկառուի Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հունվարի 8-ի թիվ 13-Ա որոշմամբ:

10. «Համապատասխանող ճգնաժամ կամ Արտակարգ իրավիճակ» նշանակում է իրադարձություն, որը հանգեցրել է կամ հավանական է, որ անխուսափելիորեն կհանգեցնի Վարկառուի համար լուրջ բացասական տնտեսական եւ/կամ սոցիալական հետեւանքների՝ կապված բնական կամ մարդածին ճգնաժամի կամ աղետի հետ:

11. «Արտակարգ իրավիճակների գործողությունների պլան» նշանակում է սույն Համաձայնագրի Առդիր 2-ի I.Դ Բաժնում նշված պլանը, որը մանրամասն

ներկայացնում է Համապատասխանող ճգնաժամին կամ Արտակարգ իրավիճակին արձագանքելու համար միջոցառումները, բյուջեն, իրագործման պլանը, ինչպես նաև վերահսկման եւ գնահատման մեխանիզմները:

12. «Արտակարգ իրավիճակների ծախսեր» նշանակում է սույն Համաձայնագրի Առդիր 2-ի 1.7 Բաժնում նշված ՊԱԻԱԲ ձեռնարկում սահմանված թույլատրելի ծախսերը, որոնք անհրաժեշտ են Պայմանական արտակարգ իրավիճակին արձագանքելու մասի համար:

13. «Բնապահպանական եւ սոցիալական հանձնառությունների պլան» կամ «ԲՍՀՊ» նշանակում է Ծրագրին առնչվող՝ 2025 թվականի մարտի 6-ի Բնապահպանական եւ սոցիալական հանձնառությունների պլան, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել՝ դրա դրույթների համաձայն, որոնցով սահմանվում են այն էական միջոցառումները եւ գործողությունները, որոնք Վարկառուն պետք է իրականացնի կամ որոնց իրականացումը պետք է ապահովի հնարավոր բնապահպանական եւ սոցիալական ռիսկերին եւ Ծրագրի ազդեցություններին արձագանքելու համար, այդ թվում՝ գործողությունների եւ միջոցառումների ժամկետները, ինստիտուցիոնալ, կադրային, ուսուցման, մոնիթորինգի եւ հաշվետվողականության միջոցառումները, ինչպես նաև բնապահպանական ու սոցիալական ցանկացած փաստաթուղթ, որը դրա շրջանակում պետք է պատրաստվի:

14. «Բնապահպանական եւ սոցիալական կառավարման շրջանակ» կամ «ԲՍԿՇ» նշանակում է բնապահպանական եւ սոցիալական կառավարման շրջանակը, որը Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Ծրագրի համար պետք է մշակվի, ընդունվի եւ իրականացվի Բանկի համար ընդունելի ձեռով, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ, եւ որը սահմանում է բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի եւ ազդեցությունների, այդ թվում՝ բացասական ռիսկերը եւ ազդեցությունները նվազեցնելուն, մեղմելուն եւ/կամ փոխհատուցելուն ուղղված միջոցառումների եւ պլանների գնահատման սկզբունքները, կանոնները,

ուղեցույցները եւ ընթացակարգերը, այդ միջոցառումների ծախսերի գնահատման եւ բյուջետավորման դրույթները, Ծրագրի հետ կապված ռիսկերին եւ ազդեցություններին հակազդելու համար պատասխանատու գերատեսչությունը կամ գերատեսչությունները, այդ թվում՝ բնապահպանական եւ սոցիալական ռիսկերը եւ ազդեցությունները կառավարելու վերջինիս կարողությունները եւ համարժեք տեղեկություններ այն տարածքի մասին, որտեղ նախատեսվում է կոնկրետ միջոցառումների տեղակայումը, այդ թվում՝ տարածքի բնապահպանական եւ սոցիալական խոցելի ցանկացած ասպեկտ եւ պոտենցիալ ազդեցություն, որոնք կարող են տեղի ունենալ, ինչպես նաեւ մեղմացման միջոցառումները, որոնք նախատեսվում է կիրառել:

15. «Բնապահպանական եւ սոցիալական ստանդարտներ» կամ «ԲՍՍ» նշանակում է, միասին՝ i) «Բնապահպանական եւ սոցիալական 1-ին ստանդարտ. Բնապահպանական եւ սոցիալական ռիսկերի եւ ազդեցությունների գնահատումը եւ կառավարումը». ii) «Բնապահպանական եւ սոցիալական 2-րդ ստանդարտ. Աշխատուժը եւ աշխատանքային պայմանները». iii) «Բնապահպանական եւ սոցիալական 3-րդ ստանդարտ. Ռեսուրսների արդյունավետություն եւ աղտոտման կանխարգելում ու կառավարում», iv) «Բնապահպանական եւ սոցիալական 4-րդ ստանդարտ. Համայնքի առողջություն եւ անվտանգություն», v) «Բնապահպանական եւ սոցիալական 5-րդ ստանդարտ. Հողի ձեռքբերում, հողի օգտագործման սահմանափակումներ եւ հարկադիր տարաբնակեցում», vi) «Բնապահպանական եւ սոցիալական 6-րդ ստանդարտ. Կենսաբազմազանության պահպանում եւ կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում», vii) «Բնապահպանական եւ սոցիալական 7-րդ ստանդարտ. Բնիկ ժողովուրդներ/Ենթասահարյան Աֆրիկայի պատմականորեն թերսպասարկված ավանդական տեղական համայնքներ», viii) «Բնապահպանական եւ սոցիալական 8-րդ ստանդարտ. Մշակութային ժառանգություն», ix) «Բնապահպանական եւ սոցիալական 9-րդ ստանդարտ. Ֆինանսական միջնորդներ», x) «Բնապահպանական եւ սոցիալական 10-րդ ստանդարտ. Շահագրգիռ կողմերի

ներգրավում եւ տեղեկությունների հրապարակում». ուժի մեջ է 2018 թվականի հոկտեմբերի 1-ից, ինչպես հրապարակվել է Բանկի կողմից:

16. «Հետադարձ կապի եւ բողոքների արձագանքման մեխանիզմ» նշանակում է Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Բանկի համար ընդունելի ձեռով ստեղծվող եւ Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում պահպանվող մեխանիզմ, որի նպատակը Ծրագրին առնչվող մտահոգությունների եւ բողոքների ստացումը եւ դրանց կարգավորման գործընթացի դյուրացումն է:

17. «Ֆինանսական կառավարման ձեռնարկ» նշանակում է ձեռնարկը, որը, որպես Ծրագրի գործառնական ձեռնարկի մաս, Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Ծրագրի համար ընդունվում է Բանկի համար ընդունելի ձեռով, եւ որը ժամանակ առ ժամանակ կարող է փոփոխվել Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ, որը սահմանում է Ծրագրի շրջանակներում ֆինանսական կառավարման մանրամասն մեխանիզմները եւ վերահսկողությունը:

18. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է 2018 թվականի դեկտեմբերի 14-ի «ՎՋՄԲ ֆինանսավորման, Ներդրումային ծրագրի ֆինանսավորման համար Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի ընդհանուր պայմանները» (վերջին վերանայումը կատարվել է 2023 թվականի հուլիսի 15-ին)՝ սույն Հավելվածի II Բաժնում սահմանված փոփոխություններով:

19. «ՋԳ» նշանակում է ջերմոցային գազ:

20. «Լրացուցիչ գործառնական ծախսեր» նշանակում է Ծրագրի իրականացման կապակցությամբ կատարված լրացուցիչ ծախսումների համար Բանկի կողմից հաստատված ողջամիտ ծախսերը, որոնք այն ծախսերն են, որոնք չէին կատարվի Ծրագրի բացակայության պարագայում, եւ որոնք բաղկացած են կապի ապահովման, գրասենյակային պարագաների եւ տեխնիկական սպասարկման, սարքավորումների սպասարկման, կոմունալ, փաստաթղթերի կրկնօրինակման կամ տպագրման, ծախսանյութերի, Ծրագրի իրականացման

առնչությամբ ուղեորությունների համար Ծրագրի անձնակազմի ուղեորությունների եւ օրապահիկի ծախսերից (բացի վերապատրաստման շրջանակներում նախատեսված այդպիսի ծախսերից), գրասենյակային տարածքի վարձակալության ծախսերից, ինչպես նաեւ Ծրագրի իրականացման առնչությամբ Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից կատարվող ցանկացած այլ ծախսից՝ պայմանով, որ նշված բոլոր ծախսերը Բանկի համար ընդունելի են եւ չեն ներառում Վարկառուի աշխատակիցներին (այդ թվում՝ Ծրագրի իրականացման կազմակերպությունում նշանակված, եթե այդպիսիք կան) եւ անդամ երկրի քաղաքացիական ծառայության պաշտոնատար անձանց վճարվող աշխատավարձերն ու այլ վճարներ:

21. «Աշխատուժի կառավարման ընթացակարգեր» նշանակում է Վարկառուի աշխատուժի կառավարման ընթացակարգերը, որոնք Ծրագրի համար պետք է մշակվեն, քննարկվեն համապատասխան շահագրգիռ կողմերի հետ, ընդունվեն եւ հրապարակվեն Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից՝ Բանկի համար ընդունելի ձեով, որոնք կարող են փոփոխվել ժամանակ առ ժամանակ՝ Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ, եւ որոնք սահմանում են դրույթներ՝ աշխատանքային պայմանների, աշխատողների հարաբերությունների կառավարման, մասնագիտական առողջության եւ անվտանգության (ներառյալ պաշտպանության անհատական միջոցները, արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը եւ դրանց արձագանքումը), վարքագծի կանոնների (ներառյալ սեռական շահագործմանը կամ բռնությանը եւ սեռական հետապնդմանն առնչվող հարաբերությունները), հարկադիր եւ մանկահասակների աշխատանքի, ծրագրի շրջանակներում աշխատողների բողոքների կարգավորման մեխանիզմների, ինչպես նաեւ կապալառուների, ենթակապալառուների եւ վերահսկող ընկերությունների համար կիրառելի պահանջների վերաբերյալ:

22. «Տեղական աշխատանքային խմբեր» կամ «ՏԱԽ»-եր նշանակում է Վարկառուի տեղական աշխատանքային խմբերը, որոնք պետք է ստեղծվեն սույն Համաձայնագրի Ադդիթի 2-ի I.Ա.4 Բաժնի համաձայն:

23. «Էկոնոմիկայի նախարարություն» կամ «ԷՆ» նշանակում է Վարկառուի՝ տնտեսության համար պատասխանատու նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

24. «Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն» նշանակում է Վարկառուի՝ կրթության, գիտության եւ սպորտի համար պատասխանատու նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

25. «Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն» նշանակում է Վարկառուի՝ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների համար պատասխանատու նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

26. «Գնումների կանոնակարգեր» Ընդհանուր պայմանների Հավելվածի 85-րդ կետի նպատակներով նշանակում է 2023 թվականի սեպտեմբերի՝ Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (ՆԾՖ) վարկառուների համար Համաշխարհային բանկի գնումների կանոնակարգերը:

27. «Ծրագրի իրականացման կազմակերպություն» նշանակում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը:

28. «Ծրագրի գործառնական ձեռնարկ» նշանակում է սույն Համաձայնագրի Առդիր 2-ի 1.Գ Բաժնում նշված ձեռնարկը, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ:

29. «Ծրագրի ղեկավարման կոմիտե» նշանակում է Վարկառուի ղեկավար կոմիտեն, որը պետք է հիմնադրվի սույն Համաձայնագրի Առդիր 2-ի 1.Ա.2 Բաժնի համաձայն:

30. «Ծրագրով աջակցվող կլաստերներ» նշանակում է Արենին, Գյումրին, Գորիսը, Դիլիջանը, Դվինը, Զերմուկը եւ Եղեգիսը:

31. «Ծրագրի աշխատանքային խումբ» կամ «ԾԱԽ» նշանակում է

Վարկառուի Ծրագրի աշխատանքային խմբերը, որոնք պետք է ստեղծվեն սույն Համաձայնագրի Ադդիթ 2-ի 1.Ա.3 Բաժնի համաձայն:

32. «Տարաբնակեցման շրջանակ» նշանակում է Վարկառուի տարաբնակեցման շրջանակը, որը Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Ծրագրի համար պետք է մշակվի, համապատասխան շահագրգիռ կողմերի հետ քննարկվի, ընդունվի եւ հրապարակվի Բանկի համար ընդունելի ձեով, որը ժամանակ առ ժամանակ կարող է փոփոխվել Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ, եւ որը սահմանում է տարաբնակեցման սկզբունքները, կազմակերպչական մեխանիզմները եւ նախագծման չափանիշները, որոնք պետք է կիրառվեն Տեղանքին առնչվող միջոցառումների համար, ներառյալ՝ տարաբնակեցման նախապատրաստման եւ իրականացման սկզբունքներն ու նպատակները, տարաբնակեցման պլանների մշակման եւ հաստատման գործընթացը, նախատեսվող տեղահանման ազդեցությունը եւ տեղահանված անձանց մոտավոր թիվն ու կատեգորիաները, տեղահանված անձանց տարբեր կատեգորիաների սահմանման համապատասխանելիության չափանիշները, առաջարկվող միջոցները՝ Վարկառուի օրենսդրության եւ Բանկի քաղաքականության պահանջների միջեւ առկա բացը լրացնելու համար, ազդակիր ակտիվների գնահատման մեթոդները, փոխհատուցման եւ տարաբնակեցման այլ աջակցության տրամադրման կազմակերպչական ընթացակարգերը, շինարարական կապալի աշխատանքների հետ փոխկապակցված տարաբնակեցման գործընթացը, բողոքների արձագանքման մեխանիզմները, տարաբնակեցման ֆինանսավորման պայմանավորվածությունները, պլանավորման, իրականացման եւ մոնիթորինգի գործընթացներում տեղահանված անձանց հետ խորհրդակցությունների ու նրանց մասնակցության մեխանիզմները, ինչպես նաեւ Ծրագրի իրականացման կազմակերպության եւ անհրաժեշտության դեպքում՝ երրորդ կողմի մշտադիտարկողների կողմից իրականացվող մոնիթորինգի միջոցառումները:

33. «Սեռական շահագործման կամ բռնության եւ սեռական ոտնձգության

դեմ գործողությունների ծրագիր» նշանակում է Վարկառուի՝ Ծրագրի համար Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Բանկի համար ընդունելի ձեռով մշակվող եւ ընդունվող՝ սեռական շահագործման կամ բռնության եւ սեռական ոտնձգության դեմ գործողությունների ծրագիրը, որը կարող է փոփոխվել ժամանակ առ ժամանակ՝ Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ, եւ որը սահմանում է Ծրագրի աշխատակիցների վարքագծի կանոնները, ինչպես նաեւ կապալառուների, ենթակապալառուների եւ վերահսկող ընկերությունների համար կիրառելի պահանջները՝ Ծրագրի շրջանակներում սեռական շահագործման կամ բռնության եւ սեռական ոտնձգությունների ռիսկերի կառավարումն ապահովելու նպատակով:

34. «Ստորագրման ամսաթիվ» նշանակում է այն երկու ամսաթվերից վերջինը, որով Վարկառուն եւ Բանկը ստորագրել են սույն Համաձայնագիրը, եւ այս սահմանումը տարածվում է Ընդհանուր պայմանների «Վարկային համաձայնագրի ամսաթվին» արվող բոլոր հղումների վրա:

35. «Տեղանքին առնչվող միջոցառումներ» նշանակում է այն գործունեությունները, որոնք Ծրագրի 2.1 Մասի շրջանակներում իրականացվելու են Ծրագրի համաձայնագրի Առդիրի 1.9.2 Բաժնի եւ Ծրագրի գործառնական ձեռնարկի համաձայն:

36. «Շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցության պլան» նշանակում է Ծրագրի համար Ծրագրի իրականացման կազմակերպության կողմից Բանկի համար ընդունելի ձեռով մշակվող, համապատասխան շահագրգիռ կողմերի հետ քննարկվող եւ հրապարակվող՝ Վարկառուի շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցության պլան, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ, եւ որը սահմանում է այն միջոցները, որոնք նախատեսված են տարբեր ազդակիր խմբերի մասնակցության խոչընդոտները վերացնելու եւ նրանց կարծիքները հաշվի առնելու համար, ներառյալ՝ տարբերակված միջոցները, որոնք ապահովում են սոցիալապես անապահով կամ խոցելի անձանց արդյունավետ մասնակցությունը, ինչպես նաեւ

շահագրգիռ կողմերին Ծրագրի վերաբերյալ ժամանակին, համապատասխան, հասկանալի եւ մատչելի տեղեկությունների տրամադրումը:

37. «Զբոսաշրջության կոմիտե» նշանակում է ԷՆ-ին կից Վարկառուի կոմիտեն, որը պատասխանատու է զբոսաշրջության համար, կամ Բանկի համար ընդունելի դրա ցանկացած իրավահաջորդ:

38. «Զբոսաշրջային ուղղությունների կառավարման կազմակերպություններ» կամ «ԶՈՒԿԿ»-ներ նշանակում է Վարկառուի կազմակերպությունները, որոնք Կլաստերների առաջնղման նպատակով ստեղծվել են Ծրագրի 1-ին մասի (գ) կետին համապատասխան եւ Ծրագրի գործառնական ձեռնարկի համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձեով:

39. «Վերապատրաստում» նշանակում է Ծրագրի շրջանակներում իրականացվող վերապատրաստումների եւ սեմինարների համար Բանկի կողմից հաստատված ողջամիտ ծախսեր, ներառյալ՝ վերապատրաստման մասնակիցների ուսուցման, ուղեւորությունների եւ օրապահիկի ծախսերը, վերապատրաստողների եւ խոսնակների մատուցած ծառայությունների ապահովման հետ կապված ծախսերը, վերապատրաստման եւ սեմինարների անցկացման համար տարածքների վարձակալության վճարները, վերապատրաստման նյութերի պատրաստմանը եւ վերարտադրմանը, ինչպես նաեւ դասընթացի կամ սեմինարի նախապատրաստմանը եւ իրականացմանն ուղղակիորեն առնչվող ծախսերը (բացառելով ապրանքները եւ խորհրդատվական ծառայությունները):

## **Բաժին II. Ընդհանուր պայմանների փոփոխությունները**

Ընդհանուր պայմանները սույնով փոփոխվում են հետեւյալ կերպ.

1. Բաժին 3.01 (*Սկզբնավճար, Պարտավճար, Ռիսկի հավելավճար*) փոփոխվում է հետեւյալ բովանդակությամբ.

«Բաժին 3.01. *Սկզբնավճար, Պարտավճար*

ա) Վարկառուն Բանկին է վճարում վարկի գումարի սկզբնավճար՝ Վարկային համաձայնագրով սահմանված դրույքաչափով: Բացառությամբ 2.07 բաժնի «բ» կետում նախատեսված դեպքերի՝ Վարկառուն սկզբնավճարը վճարում է Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո ոչ ուշ, քան վաթսուն (60) օրվա ընթացքում:

բ) Վարկառուն Վարկի չառհանված մնացորդի համար Բանկին վճարում է Պարտավճար՝ Վարկային համաձայնագրում սահմանված դրույքաչափով: Պարտավճարը հաշվեգրվում է՝ սկսած Վարկային համաձայնագրի կնքման ամսաթվից կամ Բանկի կողմից վարկի հաստատման օրվանից չորս տարին լրանալուց հետո եկող ամսաթվից՝ կախված այն հանգամանքից, թե որն է ավելի ուշ, մինչև այն համապատասխան ամսաթվերը, երբ Վարկառուն Վարկային հաշվից գումար է առհանում կամ չեղարկում: Բացառությամբ 2.07 բաժնի «գ» կետում նախատեսված դեպքերի՝ Վարկառուն Պարտավճարը կատարում է կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր վճարման ամսաթվի ավարտին»:

2. Բաժին 3.04 (*Նախապես մարումը*) փոփոխվում է հետևյալ կերպ.

«Բաժին 3.04. *Նախապես մարումը*

ա) Վարկառուն առնվազն քառասունհինգ (45) օր առաջ Բանկին ծանուցելու միջոցով կարող է Բանկին մարել հետևյալ գումարները վարկի ժամկետից շուտ, Բանկի համար ընդունելի ամսաթվով (պայմանով, որ Վարկառուն կատարել է տվյալ ամսաթվի դրությամբ Վարկի բոլոր վճարումները). i) տվյալ ամսաթվի դրությամբ Վարկի առհանված ողջ մնացորդը, կամ ii) վարկի մեկ կամ մի քանի մարման ժամկետների համար ողջ մայր գումարը: Վարկի առհանված մնացորդի ցանկացած մասնակի նախապես մարում կատարվում է Վարկառուի կողմից նշված եղանակով, իսկ եթե Վարկառուն որեւէ եղանակ չի նշել, ապա հետևյալ կերպ. Ա) Եթե Վարկային համաձայնագրով նախատեսված է Վարկի մայր գումարի կոնկրետ մասհանված գումարների առանձին մարում, ապա նախապես մարումն իրականացվում է այդ մասհանված գումարների հակադարձ հերթականությամբ, այսինքն՝ առաջին հերթին մարվում է վերջինը առհանված՝ մասհանված գումարը,

եւ տվյալ մասհանված գումարի վերջին ժամկետով մարումն իրականացվում է առաջին հերթին, եւ Բ) բոլոր այլ դեպքերում նախապես մարումն իրականացվում է Վարկի մարման ժամկետների հակադարձ հերթականությամբ, այսինքն՝ առաջին հերթին իրականացվում է վարկի վերջին ժամկետով մարումը:

բ) Եթե Վարկի նախապես մարվող որեւէ գումարի նկատմամբ իրականացվել է փոխարկում, եւ փոխարկման ժամկետը նախապես մարման պահին դեռեւս չի ավարտվել, ապա կիրառվում են 4.06 Բաժնի դրույթները»:

3. Հավելվածի՝ ի սկզբանե 75 եւ 81 համարակալված կետերում «Վարկի վճարումը» եւ «Վճարման ամսաթիվը» եզրույթները համապատասխանաբար փոփոխվել են հետեւյալ կերպ.

«75. «Վարկի վճարում» նշանակում է ցանկացած գումար, որը Վարկի կողմերը Բանկին պետք է վճարեն իրավական համաձայնագրերի հիման վրա՝ ներառելով, սակայն չսահմանափակվելով հետեւյալով՝ Վարկի առհանված մնացորդի ցանկացած գումարը, տոկոսները, Սկզբնավճարը, Պարտավճարը, տույժային դրույքափող հաշվարկվող տոկոսները (եթե կան), ցանկացած հավելագրում, փոխարկման կամ դրա վաղաժամկետ դադարեցման գործարքային կոմիսիոն վճարները, տոկոսադրույքի սահմանային շեմի կամ տոկոսադրույքի նվազագույն եւ առավելագույն շեմի՝ տոկոսային միջանցքի սահմանման համար վճարվող ցանկացած հավելավճար, ինչպես նաեւ փոխհաշվարկի արդյունքում Վարկառուի կողմից վճարվող Փոխհաշվարկի ցանկացած գումար»:

«81. «Վճարման ամսաթիվ» նշանակում է Վարկային համաձայնագրում նշված՝ Վարկային համաձայնագրի ամսաթվին կամ դրանից հետո եկող յուրաքանչյուր ամսաթիվ, որով վճարման ենթակա են տոկոսները, պարտավճարը եւ վարկի այլ վճարներ ու վճարումներ (բացառությամբ սկզբնավճարի)՝ ըստ անհրաժեշտության»:

4. Հավելվածի 4-րդ կետում (Հավելյալ ռիսկի բաշխված գումար), 53-րդ կետում (Ռիսկի հավելավճար), 99-րդ կետում (Ռիսկի ստանդարտ սահմանաչափ)

Եւ 105-րդ կետում (Ընդհանուր ռիսկ) ներկայացված սահմանումներն ամբողջությամբ հանվում են, իսկ հաջորդ կետերը վերահամարակալվում են համապատասխանաբար: